ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԽՈՉԱՆԱԿԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԼՄՓՀ-ՄԱ-ԱՊՁԲ-24/47»

ք. Երևան 18 սեպտեմբերի 2024թ.

Փամբակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝«Գնորդ», մի կողմից, և «Ար-Բե հայ-բելառուսական առևտրի տուն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գևորգ Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ճանապարհի խոզանակ սարքավորում ИУЦП 32.00.000 (այսուհետ՝ խոզանակ), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: /հավելված N 3/:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի

ժամկետում.
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,
2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:
2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:
2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:
2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:
2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:
2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:
2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:
2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:
2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 800 000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, Պայմանագրի գինը ներառում է Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը,

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 2024թ. հոկտեմբերի 31-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը(հավելված N 3.1) և հանձնման-ընդունմանարձանագրության երկու օրինակ(հավելված N3):
5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝
ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.
բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգօրյա աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:
5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:
6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.3 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:
6.4 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:
8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
8.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:
8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:
8.7 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը,

պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:
8.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
8.9 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
8.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:
9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Փամբակի համայնքապետարան	«Ար-Բե հայ-բելառուսական առևտրի տուն» ՍՊԸ
գ. Փամբակ 1փ. 23	ք. Երևան, Շիրակի 1ա
ՀՎՀՀ 06963112	ՀՎՀՀ 02247573
ՀՀ 900232270018	ՀՀ 2472302324040000
ՀՀ ֆինանս.նախ. գործ.վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
Սուրեն Կոստանդյան	Գևորգ Հովհաննիսյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«18» սեպտեմբերի 2024թ. կնքված
N «ԼՄՓՀ-ՄԱ-ԱՊՁԲ-24/47» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

/ՀՀ դրամ/

Ապրանքների							
հրավերով նախատես-ված չափաբաժ-նի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատակարարման	
						հասցեն	ժամկետը
1	39221420	Տեսակը՝ կախովի, ետևի Ընդգրկման լայնությունը՝ 1,75մ, 30 աստիճան անկյան տակ, Մաքրման ուղու լայնությունը՝ 1,75+- 0,2մ, Քաշը՝ 250կգ, Երկարությունը՝ 2մ, Աշխատանքային ռեժիմը՝ մեխանիկական տրակտորի ՀԱԼ-ի պտույտներից, Խոզանակի տրամագիծը՝ 540+-15մմ, Պտտման արագությունը 1 րոպեում՝ 260, Ագրեգատավորվում է ՝ 1,4 և ավել դասի տրակտորների հետ:	հատ	800 000	1	Փամբակ համայնք, Վահագնի բնակավայր	Մինչև 31 հոկտեմբերի 2024թ.

ԳՆՈՐԴ
Փամբակի համայնքապետարան
գ. Փամբակ 1փ. 23
ՀՎՀՀ 06963112
ՀՀ 900232270018
ՀՀ ֆինանս.նախ.
գործ.վարչություն

Սուրեն Կոստանդյան
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Ար-Բե հայ-բելառուսական առևտրի տուն» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի 1ա
ՀՎՀՀ 02247573
ՀՀ 2472302324040000
«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ

Գևորգ Հովհաննիսյան
Կ.Տ.

Հավելված N 2
«18» սեպտեմբերի 2024թ. կնքված
N «ԼՄՓՀ-ՄԱ-ԱՊՁԲ-24/47» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

/ՀՀ դրամ/

Ապրանքների														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
1	39221420	Տեսակը՝ կախովի, ետևի Ընդգրկման լայնությունը՝ 1,75մ, 30 աստիճան անկյան տակ, Մաքրման ուղու լայնությունը՝ 1,75+- 0,2մ, Քաշը՝ 250կգ, Երկարությունը՝ 2մ, Աշխատանքային ռեժիմը՝ մեխանիկական տրակտորի ՀԱԼ-ի պտույտներից, Խոզանակի տրամագիծը՝ 540+-15մմ, Պտտման արագությունը 1 րոպեում՝ 260, Ագրեգատավորվում է ՝ 1,4 և ավել դասի տրակտորների հետ:										800 000	800 000	800 000	800 000

ԳՆՈՐԴ
Փամբակի համայնքապետարան
գ. Փամբակ 1փ. 23
ՀՎՀՀ 06963112
ՀՀ 900232270018
ՀՀ ֆինանս.նախ. գործ.վարչություն

Սուրեն Կուտանդյան

ՎԱՃԱՌՈՂ
«Ար-Բե հայ-բելառուսական առևտրի տուն» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի 1ա
ՀՎՀՀ 02247573
ՀՀ 2472302324040000
«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ

Գևորգ Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, գ. Փամբակ 1փ. 23
էլ. փոստ pam-bak@mail.ru

N Ե- 24/09-47

«16» սեպտեմբերի 2024թ.

«Ար-Բե հայ-բելառուսական առևտրի տուն» ՍՊԸ-ի
տնօրեն Գևորգ Հովհաննիսյան

Հարգելի պարոն Հովհաննիսյանին

Հայտնում եմ Ձեզ, որ Փամբակի համայնքապետարանի կարիքների համար անհրաժեշտ է ձեռք բերել կից տեխնիկական բնութագրին համապատասխան ճանապարհի խոզանակ:
Ձեզ առաջարկվում է մատակարարել վերոհիշյալ ապրանքները: Համաձայնության դեպքում, խնդրում եմ ներկայացնել գնային առաջարկ:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Փամբակ համայնքի ղեկավար
պարոն Ս. Կոստանդյանին

Ի պատասխան Ձեր 2024թվականի սեպտեմբերի 16-ի Ե- 24/09-47 գրության, ես հայտնում եմ իմ համաձայնությունը Փամբակի համայնքապետարանի կարիքների համար ճանապարհի խոզանակի մատակարարման համար և ներկայացնում եմ գնային առաջարկը:

N	Գնման առարկայի անվանումը	Չափի միավորը	Հիմնական տեխնիկական ցուցանիշները	Միավորի գինը /ՀՀ դրամ/
1	Ճանապարհի խոզանակ NO-86	հատ	Տեսակը՝ կախովի, ետևի Ընդգրկման լայնությունը՝ 1,75մ, 30 աստիճան անկյան տակ, Մաքրման ուղու լայնությունը՝ 1,75+- 0,2մ, Քաշը՝ 250կգ, Երկարությունը՝ 2մ, Աշխատանքային ռեժիմը՝ մեխանիկական տրակտորի ՀԱԼ-ի պտույտներից, Խոզանակի տրամագիծը՝ 540+-15մմ, Պտտման արագությունը 1 րոպեում՝ 260, Ագրեգատավորվում է՝ 1,4 և ավել դասի տրակտորների հետ:	800 000

«Ար-Բե հայ-բելառուսական առևտրի տուն» ՍՊԸ տնօրեն Գևորգ Հովհաննիսյան

17. 09. 2024թ.

Հաստատում եմ՝
Փամբակ համայնքի ղեկավար
Ս. Կոստանդյան
կ.տ
16 սեպտեմբերի 2024թ.

ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԽՈԶԱՆԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Գնման առարկայի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Հիմնական տեխնիկական ցուցանիշները
1	Ճանապարհի խոզանակ NO-86	հատ	1	Տեսակը՝ կախովի, ետևի Ընդգրկման լայնությունը՝ 1,75մ, 30 աստիճան անկյան տակ, Մաքրման ուղու լայնությունը՝ 1,75+- 0,2մ, Քաշը՝ 250կգ, Երկարությունը՝ 2մ, Աշխատանքային ռեժիմը՝ մեխանիկական տրակտորի ՀԱԼ-ի պտույտներից, Խոզանակի տրամագիծը՝ 540+-15մմ, Պտտման արագությունը 1 րոպեում՝ 260, Ագրեգատավորվում է ՝ 1,4 և ավել դասի տրակտորների հետ:

Հաստատում եմ՝
Փամբակ համայնքի ղեկավար

Ս. Կոստանդյան

Կ.տ

16 սեպտեմբերի 2024թ.

Փամբակ համայնքի 2024թ. տարեկան բյուջեով համայնքապետարանի կարիքների համար նախատեսվել է ձեռք բերել 800 000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամի ճանապարհի խոզանակ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման առարկայի գինը չի գերազանցում գնումների բազային միավորը և առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով առաջարկում եմ վերոհիշյալ ապրանքները ձեռք բերել մեկ անձից:

Հավելված N 3
«18» սեպտեմբերի 2024թ. կնքված
N «ԼՄՓՀ-ՄԱ-ԱՊՁԲ-24/47» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Ար-Բե հայ-բելառուսական առևտրի տուն» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի 1ա
ՀՎՀՀ 02247573
ՀՀ 2472302324040000
«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ

Պատվիրատու
Խամբակի համայնքապետարան
գտնվելու վայրը գ.Փամբակ 1փ.23
ՀՀ 900232373028
ՀՎՀՀ 06963112
ՀՀ Ֆին. նախ. գործ. վարչություն

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«15» հոկտեմբերի 2024թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Փամբակի համայնքապետարանի կարիքների համար Խոզանակ սարքավորում գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «18» սեպտեմբերի 2024թ.

Պայմանագրի համարը՝ N «ԼՄՓՀ-ՄԱ-ԱՊՁԲ-24/47»

Պատվիրատուն՝ ի դեմս Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս «Ար-Բե հայ-բելառուսական առևտրի տուն» ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Գ. Հովհաննիսյանի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «14» հոկտեմբերի 2024թ. դուրս գրված N A 9117123967 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Խոզանակ սարքավորում	Տեսակը՝ կախովի, ետևի Ընդգրկման լայնությունը՝ 1,75մ, 30 աստիճան անկյան տակ, Մաքրման ուղու լայնությունը՝ 1,75+- 0,2մ, Քաշը՝ 250կգ, Երկարությունը՝ 2մ, Աշխատանքային ռեժիմը՝ մեխանիկական տրակտորի ՀԱԼ-ի պտույտներից, Խոզանակի տրամագիծը՝ 540+-15մմ, Պտտման արագությունը 1 րոպեում՝ 260, Ագրեգատավորվում է՝ 1,4 և ավել դասի տրակտորների հետ:	1	1	31,10,2024թ	14,10,2024	800 000	31,10,2024թ
	ընդամենը						800 000	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ազգանուն, անուն
Կ.Տ

Ապրանքը ընդունեց

ստորագրություն
ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ազգանուն, անուն
Կ.Տ

Հավելված 3.1
«18» սեպտեմբերի 2024թ. կնքված
N «ԼՄՓՀ-ՄԱ-ԱՊՁԲ-24/47» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N 01

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ար-Բե հայ-բելառուսական առևտրի տուն» ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Գ. Հովհաննիսյան (այսուհետ՝ Կատարող) միջև 2024թ. սեպտեմբերի 18-ին «ԼՄՓՀ-ՄԱ-ԱՊՁԲ-24/47» գնման պայմանագրի շրջանակներում կատարողը 2024թ. հոկտեմբերի 15-ի հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
խոզանակ սարքավորում ИУЦЛ 32.00.000	հատ	1

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց	Ընդունեց
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Ստորագրություն	ստորագրություն